




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԵՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ISSN 1829-0280

# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



**ВЕСТНИК**

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

**MESSENGER**

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2022 [4]  
ԵՐԵՎԱՆ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի հայցորդ

 <https://orcid.org/0000-0001-6238-3295>

## ԵԱՏՄ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա ժամանակաշրջանում անհնար է պարկերացնել որևէ երկիր կամ կազմակերպություն, որը կարող է միջազգային հարաբերություններ հաստատել առանց թվային տնտեսության: ԵԱՏՄ թվային տնտեսության ստեղծման հիմքում անդամ երկրների միջև տնտեսական համագործակցությունն է և զարգացումը: Ռազմավարական տեսանկյունից թվային տնտեսության մոդելն ամենամեծ ազդեցությունն է ունենալու երկրների արդյունաբերական զարգացման, առևտրաշրջանառության ավելացման, տարատեսակ բիզնես գործընթացների կազմակերպման և կառավարման, թվային ենթակառուցվածքների ստեղծման և դրանց հիման վրա տնտեսական նոր մոդելների կառուցման վրա: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել թվային տնտեսության ռազմավարությունը, դիտարկել ռազմավարության հիմքում առկա թվային օգուտները, ինչպես նաև բացահայտել ազդեցությունը երկրի ՀՆԱ և զբաղվածության աճի վրա, վերլուծել կատարված կանխատեսումները:

**Հիմնաբառեր.** ԵԱՏՄ, թվային տնտեսություն, էլեկտրոնային առևտուր, ռազմավարություն, թվային բիզնես

JEL: L81, O32, O33

DOI: 10.52174/1829-0280\_2022.4-97

**Ներածություն:** Ներկայումս մարդիկ անընդհատ օգտագործում են թվային հարթակները՝ սովորելու, աշխատանք գտնելու, իրենց տաղանդը ցուցադրելու և անձնական առևտրային ցանցեր կառուցելու համար: 2022 թվականի

դրությամբ մոտ 900 միլիոն մարդ միջազգային կապեր ունի սոցիալական ցանցերի միջոցով, իսկ 360 միլիոն մարդ մասնակցում է անդրասահմանային էլեկտրոնային առևտրին: Թվային հարթակները ինչպես ավանդական զբաղվածության, այնպես էլ անկախ գործունեության համար սկսում են ստեղծել ավելի ընդգրկուն աշխատաշուկա<sup>1</sup>: Հենց այս հանգամանքների արդյունքում էլ 2016 թվականին ԵԱՏՄ-ն ոչ միայն սկսել էր մշակել թվային տնտեսության ձևավորման առաջարկները, այլև արդեն իսկ որոշվել էին հետևյալ գերակայությունները.

- ԵԱՏՄ նորմատիվ-օրենսդրական դաշտի կարգավորում և անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում,
- միասնական թվային տարածության ձևավորում՝ էլեկտրոնային առևտրի ներդրմամբ առևտրաշրջանառությունը մեծացնելու համար,
- ՏՀՏ օգտագործման փորձի ընդլայնում՝ պետական մարմինների, տնտեսավարող սուբյեկտների և անհատների միջսահմանային փոխգործակցության արդյունավետության բարելավման համար,
- համատեղ ծրագրերի մշակում՝ ուղղված Միության անդամ երկրների տնտեսությունների թվային վերափոխմանը<sup>2</sup>:

Նշենք, որ, այս ամենին զուգընթաց, թվարկված գերակայությունների իրականացման հիմքում հեռահաղորդակցության ոլորտի ծառայություններն են: Այդ նպատակով խիստ արդիական է դառնում հեռահաղորդակցության ծառայությունների զարգացման համատեքստում ԵԱՏՄ թվային տնտեսության ստեղծման ու զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը և դրանց գնահատումը:

Սույն հոդվածի հիմնական նպատակը ԵԱՏՄ թվային տնտեսության ստեղծման գործընթացի ու զարգացման հեռանկարների ուսումնասիրությունն է, իսկ խնդիրը՝ թվային տնտեսության ռազմավարական օրակարգի քննությունն ու դրա առաջխաղացմանն ուղղված առաջարկություններով հանդես գալը: Հետազոտության հիմքում դրված են հետևյալ հարցերը.

- ուսումնասիրել և ներկայացնել թվային օրակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները,
- դիտարկել ՀՆԱ համեմատական աճը ԵԱՏՄ երկրներում 2018–2025 թթ. ընթացքում թվային տնտեսության ներդրման ժամանակ,
- քննարկել թվային տնտեսության ազդեցությունը ԵԱՏՄ երկրների զբաղվածության աճի վրա մինչև 2025 թվականը,
- ուսումնասիրել ԵԱՏՄ թվային տնտեսության մոդելի թվային օգուտներն ու ռազմավարության մշակման հիմքերը,
- քննության առնել և ներկայացնել ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման առաջարկությունները:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Mckinsey» վերլուծական ընկերության պաշտոնական կայքէջում, <https://www.mckinsey.com/business-functions/mckinsey-digital/our-insights/digital-globalization-the-new-era-of-global-flows#>

<sup>2</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգը մինչև 2025 թվականը. հեռանկարներ և առաջարկություններ» զեկույցը, <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>, էջ 1-2:

**Գրականության ակնարկ:** Ըստ Եվրասիական տնտեսական միության «Թվային օրակարգ» զեկույցի թվային լուծումների՝ ընդհանուր թվային հարթակների և թվային ենթակառուցվածքների ձևավորված էկոհամակարգը բաղկացած է լինելու տարածաշրջանային և ազգային մակարդակներում փոխկապակցված և ինտեգրված բաղադրիչներից, ինչը ենթադրում է սերտ համագործակցություն ծրագրի մշակման և իրականացման ամբողջ գործընթացում: Թվային տնտեսությունը հնարավորություն կտա հավաքագրելու բոլոր հաճախորդների տվյալները և դրանք ավելի արդյունավետ մշակելու ու կիրառելու տարբեր բիզնես գործընթացներում<sup>3</sup>:

Ըստ Վլադիմիր Բիլոզուբենկոյի, Օլիա Յատչուկի, Ելզբիետա Վոլանինի, Տետիանա Սերեդիուկի, Մաքսիմ Կորնեևի կատարած հետազոտության՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համատարած օգտագործումը և դրան հաջորդած վերափոխումները հանգեցրել են թվային տնտեսության ձևավորմանը<sup>4</sup>: Նրանց կարծիքով՝ Եվրամիությունը, որպես միջազգային կազմակերպություն, դարձել է նման տնտեսության կառուցման առարկա՝ ձգտելով անդամ երկրներին մերձեցնել թվայնացման ոլորտում: Սույն հոդվածի նպատակի համաձայն՝ ստեղծվել է 20 ցուցիչ DE վեկտորը և օգտագործվել k-means ալգորիթմն ու Էվկլիդյան հեռավորության մետրիկը: Դասակարգման համար կիրառվել է որոշման ծառի մեթոդը: ԵՄ երկրների երեք կլաստերներ առանձնացվել են ըստ DE զարգացման մակարդակի (առաջնորդներ, հետևորդներ և կողմնակի անձինք), ինչը թույլ է տվել գնահատել նրանց դիրքերը միմյանց նկատմամբ: Բացահայտվել են այն հիմնական պարամետրերը, որոնք որոշում են երկրների դիրքն ընդհանուր վարկանիշում: ԵՄ երկրներում DE-ի ստեղծումը վերահսկելու համար կազմվում է պարամետրային աղյուսակ, որը, բացի հիմնական պարամետրերից, ներառում է առավելագույն, նվազագույն և միջին պարամետրեր: Այդ պարամետրերի միջին արժեքներն ըստ կլաստերի բնութագրում են ԵՄ երկրներում DE-ի զարգացման լանդշաֆտը, գնահատում թվային տարածությունը և հիմք հանդիսանում ոլորտում միասնական որոշումների կայացման համար:

Ըստ Տ. Վ. Վերոնինայի, Ն. Ն. Եվչենկոյի, Ա. Բ. Յացենկոյի «ԵԱՏՄ երկրների թվային տնտեսության զարգացման վիճակը և ռազմավարությունը» գիտական զեկույցի՝ ազգային պետությունները, ինչպես նաև աշխարհի ինտեգրման միությունների մաս կազմող երկրներն իրենց առևտրային համաձայնագրերում ներառում են թվային տնտեսությունը խթանելու և կարգավորելու կետեր, որոնք կարող են մեծացնել մրցունակությունը և ամրապնդել երկրի դիրքերը գլոբալ աշխարհում: Ըստ հեղինակների՝ ԵԱՏՄ-ի համար (որպես ինտեգրման հաջողակ միություն) անհրաժեշտ է լինելու տնտեսության թվային վերափոխում՝ հիմնված միասնական թվային շուկայի ձևավորման վրա: Կարևոր է ընդգծել նաև, որ այդ ամենի իրականացումը կխթան

<sup>3</sup> Տե՛ս ԵԱՏՄ թվային օրակարգ.

[http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital\\_agenda\\_eaeu.pdf](http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital_agenda_eaeu.pdf), էջ 52:

<sup>4</sup> Տե՛ս **Bilozubenko Vladimir** (Ukraine), **Yatchuk Olha** (Ukraine), **Wolanin Elzbieta** (Poland),

**Serediuk Tetiana** (United States of America), **Korneyev Maxim** (Ukraine), Comparison of the digital economy development parameters in the EU countries in the context of bridging the digital divide., Problems and Perspectives in Management, Volume 18, Issue 2, 2020,

<https://pdfs.semanticscholar.org/5868/2ab40a23e204b931363775d5004ef8fb2a49.pdf>

նի ՏՀՏ զարգացումը, ինչն էլ սերտորեն կապված է ԵԱՏՄ երկրների արտահանման ռեսուրսների ավելացման հետ<sup>5</sup>:

Ըստ Ս. Գ. Կարեպովայի, Ի. Ա. Սելեզնյովայի «ԵԱՏՄ թվային տնտեսության ինովացիոն ծրագրերի զարգացում» հրատարակման՝ գլոբալացվող աշխարհում մակրոտարածաշրջանային ինտեգրումը կարող է դիտվել որպես մրցունակության մակարդակի բարձրացման մեթոդ, երբ միմյանց հետ կմրցեն ոչ թե առանձին ազգային տնտեսություններ, այլ խոշոր տարածաշրջանային տնտեսական միություններ, որն էլ, իր հերթին, մեծ դեր կխաղա «հզոր վերազգային ասոցիացիայի» ստեղծման գործում, կդառնա ժամանակակից աշխարհի բեռններից մեկը և «արդյունավետ» կապի միջոց կլինի «Եվրոպայի և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանների միջև»<sup>6</sup>:

Ըստ Վ. Պ. Կուպրիյանովսկիի, Օ. Ն. Դունակի, Ն. Օ. Ֆեդորովայի, Գ. Ե. Նամիտի, Յ. Վ. Կուպրիյանովսկիի «Ինտելեկտուալ շարժունությունը թվային տնտեսությունում» գիտական զեկույցի՝ թվային տնտեսությունն արագորեն փոխակերպում է տարբեր ոլորտներ, ինչպիսիք են կրթությունը և արհեստական բանականությունը: Սակայն, ըստ հեղինակների, թվայինի վերափոխվող տնտեսության ոլորտներից առանցքային է լոգիստիկան: Թվային լոգիստիկան լուրջ մարտահրավեր է բոլոր երկրների համար, քանի որ դրա արդյունքում մատակարարման շղթաների բարդության մակարդակն աստիճանաբար նվազելու է, իսկ հասարակության և հաճախորդների սպասելիքներն աճելու են<sup>7</sup>:

Համաձայն ԵԱՏՄ թվային տնտեսության ռազմավարության նպատակների՝ արդյունաբերության վերափոխումը թվայինի հիմնված է լինելու արդյունաբերական գործընթացների ավտոմատացման արդյունքների վրա, որն էլ սերտորեն կապված է լինելու տնտեսական մյուս գործընթացների հետ և իրականացվելու է գործընկերների հետ համագործակցությամբ: Տնտեսական հատվածների թվային վերափոխումը տեղի է ունենալու արդյունաբերական ձեռնարկությունների ներքին գործընթացների ուղղահայաց և հորիզոնական ինտեգրման ու միջազգային գործընկերային հարաբերությունների կառուցման, ապրանքների արտադրության ու իրացման, ծառայությունների մատուցման և հաճախորդների պահանջմունքների բավարարման հիման վրա<sup>8</sup>: Այս ամենը, կարծում ենք, հնարավորություն կտա ավելի կարճ ժամանակահատվածում ու ավելի ճկունորեն պլանավորելու, կազմակերպելու և

<sup>5</sup> Տե՛ս **Воронина Т. В., Евченко Н. Н., Яценко А. Б.**, Состояние и стратегии развития цифровой экономики стран ЕАЭС, Ученые записки Крымского федерального университета имени В. И. Вернадского, «Экономика и управление», 2018, file:///C:/Users/LS/Downloads/sostoyanie-i-strategii-razvitiya-tsifrovoy-ekonomiki-stran-eaes.pdf, էջ 36-37:

<sup>6</sup> Տե՛ս **Кареева С.Г., Селезнев И.А.**, О развитии инновационных проектов и цифровой экономики ЕАЭС: возможности, вызовы и риски, <https://cyberleninka.ru/article/n/o-razvitiy-innovatsionnyh-proektov-i-tsifrovoy-ekonomiki-eaes-vozmozhnosti-vyzovy-i-riski/viewer>, էջ 112-113:

<sup>7</sup> Տե՛ս **Куприяновский В.П., Дунаев О.Н., Федорова Н.О., Намиот Д.Е., Куприяновская Ю.В.**, Интеллектуальная мобильность в цифровой экономике, International Journal of Open Information Technologies ISSN: 2307-8162, N2, 2017, <https://cyberleninka.ru/article/n/intellektualnaya-mobilnost-v-tsifrovoy-ekonomike/viewer>

<sup>8</sup> Տե՛ս ԵԱՏՄ թվային օրակարգ, [http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital\\_agenda\\_eaeu.pdf](http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital_agenda_eaeu.pdf)

կառավարելու թվարկված տնտեսական գործընթացները, արդյունքում կրճատելով որոշակի ծախսեր:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, առաջնորդվելով ՀՀ Կառավարության որդեգրած առաջնահերթություններով, թվայնացման միջոցով նախատեսում է նպաստել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ու հասանելիության աստիճանի մեծացմանը, պետական կառավարման, տնտեսության արդյունավետության բարձրացմանը, տնտեսական գործունեության նոր ձևերի առաջացմանը, էլեկտրոնային առևտրին, թվային տեխնոլոգիաների վերաբերյալ հասարակության տեղեկացվածությանը և նոր՝ թվային կարողություններով օժտմանը<sup>9</sup>:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հետազոտության համար որպես տեսական, գիտական և տեղեկատվական հիմք են ծառայել ԵԱՏՄ անդամ երկրների շուկաների ուսումնասիրությունը, շուկայում առկա հիմնախնդիրների և մարտահրավերների վերաբերյալ հենց կառույցի կողմից իրականացված վերլուծությունները և հրապարակված զեկույցները, համացանցում զետեղված տեղեկությունները, ինչպես նաև հեռահաղորդակցության շուկայի և ԵԱՏՄ թվային տնտեսության վերաբերյալ տվյալներ պարունակող թվայնացված շտեմարանները: Հոդվածում կիրառվել են պատմական, վերլուծական, գրաֆիկական, համեմատական, վերացարկման, համադրության մեթոդները: Գրաֆիկական և վերլուծական մեթոդների օգնությամբ վերլուծության են ենթարկվել և ներկայացվել ՀՆԱ համեմատական աճը ԵԱՏՄ երկրներում 2018–2025 թթ. ընթացքում թվային տնտեսության ներդրման ժամանակ: Գրաֆիկական, վերլուծական և համեմատական մեթոդների օգնությամբ ուսումնասիրվել և ներկայացվել է թվային տնտեսության ազդեցությունը ԵԱՏՄ երկրների զբաղվածության աճի վրա մինչև 2025 թվականը: ԵԱՏՄ թվային տնտեսության ռազմավարության վերլուծության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայելու անդամ երկրների ու միջազգային կառույցների կողմից հրապարակված ֆինանսական ու վիճակագրական տվյալները և զեկույցները<sup>10</sup>: Պատմական և համեմատական մեթոդների օգնությամբ վերլուծության են ենթարկվել ԵԱՏՄ թվային տնտեսության մոդելի թվային օգուտներն ու ռազմավարության ստեղծման հիմքերը: Հետազոտության վերլուծական մասի ապահովման համար կիրառվել է կանխատեսման՝ արտարկման (էքստրապոլյացիայի) մեթոդը, որը հնարավորություն է տվել բացահայտելու և ներկայացնելու ամբողջ աշխարհում համացանցի օգտատերերի թիվը 2030 թվականին: ԵԱՏՄ երկրների շուկաների ուսումնասիրության, թվային տնտեսության ներդրման և զարգացման հնարավորությունների, մարտահրավերների և նորարարությունների վերաբերյալ ցուցանիշների ուսումնասիրությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով 2016–2021 թվականներին տեղի ունեցած փոփոխությունները և գրանցված արդյունքները,

<sup>9</sup> Տե՛ս Հայաստանի թվայնացման ռազմավարություն. 2021-2025, հավելված N 1, ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183 -Լ որոշումը, [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2021/02/183\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/183_1.pdf), էջ 15:

<sup>10</sup> Տե՛ս ԵԱՏՄ թվային օրակարգ, [http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital\\_agenda\\_eaeu.pdf](http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital_agenda_eaeu.pdf)

որպեսզի ավելի հստակ ներկայացվեն ոլորտի ներկայիս վիճակը և զարգացման հնարավորությունները: Ընդ որում, տվյալների համադրման, ցուցանիշների համեմատության և կանխատեսման նպատակով օգտագործվել են ոչ թե ամսական միջինացված կամ կլորացված տվյալներ, այլ եռամսյակային կամ տարեկան ցուցանիշներ, որը թույլ է տվել վերլուծել և ներկայացնել ՀՆԱ համեմատական աճը ԵԱՏՄ երկրներում 2018–2025 թթ., թվային տնտեսության ազդեցությունը այդ երկրների զբաղվածության աճի վրա և, ըստ այդմ, ավելի խորքային ուսումնասիրությունն իրականացնել, եզրակացություններ կատարել և առաջարկություններով հանդես գալ:

**Վերլուծություն:** ԵԱՏՄ-ում թվային տնտեսության ստեղծման անհրաժեշտության մասին խոսակցությունները սկսվել են դեռևս 2016 թվականին՝ Միության ստեղծումից մեկ տարի անց: Մինչ օրս այդ ծրագրի շրջանակներում դիտարկվել են տարբեր նախագծեր, որոնք պետք է նպաստեին դրա իրագործմանը և եվրասիական տարածքում ընդհանուր թվային շուկաների ստեղծմանը: Երկար քննարկումների արդյունքում ստացվել էր 200 էջից բաղկացած «ԵԱՏՄ թվային օրակարգ 2016–2025» փաստաթուղթը, որը ծառայելու էր որպես հետագա զարգացման ռազմավարություն մինչև 2025 թվականը: Այս ռազմավարության շրջանակներում նախատեսվում էր նաև թվային արդյունաբերական համագործակցություն, թվային տրանսպորտային միջանցքների ստեղծում և նույնիսկ աշխատանքային շուկայի գործունեությունը թվային հարթակի վրա իրականացնելու հնարավորություն: Ըստ այդ օրակարգի՝ մինչև 2025 թվականի թվային օրակարգի խնդիրներն են լինելու.

- ԵԱՏՄ թվային տնտեսության ներդրում համախառն ներքին արդյունքի տարեկան աճում,
- թվային տնտեսությունում աշխատատեղերի ավելացում,
- թվային մեխանիզմի ներդրում գերակա ոլորտներում արտադրողականության բարձրացման նպատակով,
- թվայնացման միջոցով ապրանքների և ծառայությունների արտահանման աճ<sup>11</sup>:

Թվային տնտեսության մոդելի հիմնական նպատակներն են<sup>12</sup>.

- թվային էկոհամակարգի ստեղծում անդամ երկրների միջև փոխհամագործակցության համար,
- փոքր ու միջին ձեռնարկություններին խոշոր արտադրական շղթաների մեջ ներգրավում,
- արտադրության մոդելավորում և արտադրական գործընթացների օպտիմալացում նորարարական տեխնոլոգիաների կիրառության միջոցով,
- նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ նորարարությունների խթանում,


<sup>11</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգը մինչև 2025 թվականը. հեռանկարներ և առաջարկություններ» գեկույցը, <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>, էջ 6:

<sup>12</sup> Տե՛ս ԵԱՏՄ թվային օրակարգ, [http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital\\_agenda\\_eaeu.pdf](http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital_agenda_eaeu.pdf)

- գյուղատնտեսական սուբյեկտների արտադրանքի առաջխաղացում անդամ և 3-րդ երկրների միջև:

Թվային տնտեսության մեջ կապիտալացման հիմնական աղբյուրը թվային պլատֆորմներն ու թվային ռեսուրսներն են լինելու: Թվային տնտեսության շրջանակներում ԵԱՏՄ անդամ երկրների համագործակցությունը թույլ կտա ոչ միայն հաշվեկշռել տվյալների օգտագործումը (անձնականից մինչև արդյունաբերական), այլ նաև պայմաններ կստեղծի թվային տնտեսության նոր հատվածների ստեղծման և նոր փորձի ձեռքբերման համար<sup>13</sup>: Թվային տնտեսության հիմքում թվային ակտիվներն (տվյալները՝ big data<sup>14</sup>) են, որոնք նոր բիզնես մոդելների ստեղծման հիմքն են կազմում, կուտակվում են «մեծ տվյալների» մշակման արդյունքում ու կիրառվում արհեստական բանականության տեխնոլոգիաների միջոցով՝ որոշումների կայացման համար: Կուտակված տվյալների հիման վրա հնարավոր կլինի ավելի ճշգրիտ կերպով վերլուծել արդյունքները և գնահատել զարգացման հեռանկարները, ինչն էլ, իր հերթին, մեծ դեր է նշանակություն կունենա բիզնես գործընթացների հետագա պլանավորման և կազմակերպման համար:

«Թվային տնտեսություն» մոդելի ներդրումը կազդի նաև անդամ երկրների ՀՆԱ աճի վրա, որն էլ, բնականաբար, կնպաստի երկրների տնտեսությունների զարգացմանը: Ավելին, ըստ ԵԱՏՄ թվային ռազմավարության կանխատեսման, թվային տնտեսության դեպքում երկրների զարգացման ընթացքն ավելի արագ տեղի կունենա, և արդյունքներն ավելի շատ կլինեն, քան ավանդական զարգացման պարագայում:



**Գծապատկեր 1. ՀՆԱ համեմատական աճը ԵԱՏՄ երկրներում 2018-2025 թթ.՝ թվային տնտեսության ներդրման ժամանակ (%)<sup>15</sup>**

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:


<sup>14</sup> Տե՛ս «lexisnexis» ընկերության պաշտոնական կայքէջ, [https://bis.lexisnexis.com/intnl/bigdatatools?gclid=CjwKCAiAnO2MBhApEiwa8q0HYW00Fq5jUxiUKaw124WKm53K0NXvBfvInXHrnBJWF4h\\_jB36EpFdVRoCcu4QAvD\\_BwE](https://bis.lexisnexis.com/intnl/bigdatatools?gclid=CjwKCAiAnO2MBhApEiwa8q0HYW00Fq5jUxiUKaw124WKm53K0NXvBfvInXHrnBJWF4h_jB36EpFdVRoCcu4QAvD_BwE)

<sup>15</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգը մինչև 2025 թվականը. հեռանկարներ և առաջարկություններ» զեկույցը,



Ըստ գծապատկեր 1-ի՝ թվային տնտեսության մոդելի ներդրման արդյունքում միջազգային մակարդակով երկրների համացանցային թողունակությունն աճելու է 0,11%-ով՝ 0,55%-ից հասնելով 0,66%-ի, ֆիքսված ինտերնետ կապի ներթափանցումը ևս աճելու է՝ 0,8%-ից հասնելով 1,7%-ի, բացի այդ աճելու է նաև երկրների միջև էլեկտրոնային առևտրի տարածումը՝ 0,44%-ից հասնելով 0,88%-ի, որն էլ, իր հերթին, նպաստելու է երկրների տնտեսությունների աճին: Ինչպես տեսնում ենք, այս ցուցանիշներից ամենաբարձր աճը գրանցել է համացանցային կապը, ինչը, կարծում ենք, դեռ շարունակական է լինելու:

Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) կատարած հետազոտության արդյունքների համաձայն՝ 2021 թվականին համացանցից օգտվում է մոտավորապես 4,9 միլիարդ մարդ կամ աշխարհի բնակչության 63%-ը: Սա 2019 թվականի համեմատությամբ 17 տոկոսով ավելի է, քանի որ այդ ժամանակահատվածից սկսած 782 միլիոն մարդ մուտք է գործել առցանց հատված: Այս ամենը կապված է COVID 19-ի հետ, որի ի հայտ գալը, բնականաբար, նպաստել է համացանցի օգտատերերի քանակի ավելացմանը: Այնուամենայնիվ, դեռևս 2,9 միլիարդ մարդ դեռ մնում է ցանցից դուրս<sup>16</sup>:



**Գծապատկեր 2. 2005–2021 թթ. համաշխարհային մակարդակով համացանցի օգտատերերի թիվը (մլրդ մարդ)<sup>17</sup>**


Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2005–2021 թթ. համաշխարհային մակարդակով համացանցի օգտատերերի թիվն աճել է, մասնավորապես՝ 2005–2015 թթ. 16%-ից հասել է 41%-ի, իսկ 2015-ից մինչև 2021 թվականն աճել է 22%-ով՝ 41%-ից հասնելով 63%-ի: 2015–2021 թթ. ընթացքում այդ ցուցանիշը հասել է 2.9 միլիարդի. տարեկան կտրվածքով ցուցանիշն աճել է 200-300 միլիոնով, և եթե այս ցուցանիշներից ելնելով կանխատեսենք առաջիկա 8 տարվա դինամիկան, կարող ենք նշել, որ 2030 թվականին համացանցի օգտատերերի թիվն ամբողջ աշխարհում կհասնի 7,3 միլիարդի (աշխարհի բնակչության 87%-ը):

<http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>, էջ 2:

<sup>16</sup> Տե՛ս Հեռահաղորդակցության միջազգային միության պաշտոնական կայքէջ, <https://www.itu.int/en/ITU-D/Statistics/Pages/stat/default.aspx>

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը:

Թվային հարթակը նոր տնտեսական գործունեության հիմքը կդառնա, որը սուբյեկտներին միմյանց կկապի տնտեսական գործընթացների միջոցով՝ սկզբից մինչև վերջ: Բացի այդ, մեկ թվային պլատֆորմի և միևնույն տնտեսական գործընթացի շուրջ կարողանան հավաքվել տարբեր շահագրգիռ մասնակիցներ, որի արդյունքում դրական փոփոխություն և աճ կգրանցվի նաև Միության անդամ երկրների զբաղվածության մակարդակում:



**Գծապատկեր 3. Թվային տնտեսության ազդեցությունը ԵԱՏՄ երկրների զբաղվածության աճի վրա մինչև 2025 թվականը (%)<sup>18</sup>**

Ըստ գծապատկեր 3-ի՝ թվային տնտեսության սցենարի դեպքում երկրներում զբաղվածությունը կաճի. մասնավորապես՝ ԷԷ-ում 1,5%-ի փոխարեն կլինի 2,2%, Բելառուսում 1,4%-ի փոխարեն՝ 1,9%, Ղազախստանում 1,2%-ի փոխարեն՝ 2%, Ղրղզստանում 1,9%-ի փոխարեն՝ 2,8%, իսկ ՌԴ-ում 1,6%-ի փոխարեն՝ 2,6%: Կարծում ենք՝ այս կանխատեսումները կարող են թվային տնտեսության ներդրման անհրաժեշտության հիմք հանդիսանալ և դիտարկվել որպես տնտեսության զարգացման նոր մեխանիզմ:


Միության անդամ պետությունների ռեզիդենտների կողմից այդպիսի թվային ակտիվների ձևավորումը կմեծացնի նաև նրանց մրցունակությունը և թույլ կտա սեփականատերերին անընդհատ ստանալ լրացուցիչ մտավոր և նյութական ռեսուրսներ և ավելի հեշտ մուտք գործել համաշխարհային շուկա: Մեր կարծիքով՝ այս ոլորտում թվային տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել թվային հարթակներ և էկոհամակարգեր, թվային նորարարությունների արտադրության և շրջանառության համար բարենպաստ միջավայր ստեղծել, թվային նորաստեղծ ընկերությունների և թվային տնտեսության զարգացման նախագծերին աջակցություն ցուցաբերել:

ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների զարգացման վրա էականորեն կազդի կապիտալի և ֆինանսական շուկաների թվային վերափոխու-

<sup>18</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգը մինչև 2025 թվականը. հեռանկարներ և առաջարկություններ» զեկույցը, <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>, էջ 2:

մը: Մեծ նշանակություն կունենա նաև աշխատաշուկայի թվայնացումը, քանի որ դրա արդյունքում էապես կփոխվի աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռությունը: Աշխատանքային ռեսուրսների որակավորումը և հմտությունների զարգացումը կազդեն Միության երկրների տնտեսությունների վերափոխման գործընթացների արդյունավետության վրա: Այս մարտահրավերները մասնագիտական թվային հմտությունների և մարդկանց ստեղծագործական ներուժի զարգացման նոր պայմանների ստեղծման հիմք կհանդիսանան, որոնք էլ աշխատուժի արտադրողականության կայուն բարձրացման կարևոր բաղադրիչներ կդառնան:

Թվային տնտեսության ռազմավարության առանցքը տնտեսության զարգացումն է, որից բխում են անդամ երկրների միջև թվային հարթակում սերտ համագործակցությունն ու փոխգործակցությունը, դրան նպաստող հարակից ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը, ոլորտային և միջոլորտային կապերի ապահովումը, թվային որոշումների կայացումը: Բացի այդ, թեև նշված չէ, բայց, կարծում ենք՝ թվային տնտեսության հիմքում առաջնահերթ պետք է համարվեն հեռահաղորդակցության ոլորտի ծառայությունները և անդամ երկրների՝ այդ ոլորտի հնարավորությունները, քանի որ առանց կապի անհնար կլինի կյանքի կոչել այդ նախաձեռնությունը:



**Գծապատկեր 4. ԵԱՏՄ թվային տնտեսության մոդելի թվային օգուտներն ու ռազմավարության ստեղծման հիմքերը<sup>19</sup>**

Ըստ կանխատեսումների՝ մինչև 2025 թվականը Եվրասիական տնտեսական միության սպասվող կուտակային ՀՆԱ աճի առնվազն 11%-ը պետք է ապահովվի թվային նախագծերի և նախաձեռնությունների իրականացումը: Եթե Միության երկրներն իրենց ջանքերը չուղղեն թվային օրակարգը կյանքի կոչելուն, ապա կատարված ներդրումը ՀՆԱ աճին կնպաստի կիսով չափ: Այս մասին նշված է մինչև 2025 թվականը Եվրասիական տնտեսական միու-

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 4:

թյան թվային օրակարգի իրականացման ուղեցույցի նախագծում: Կարծում ենք՝ թվային տնտեսության ռազմավարության ամենակարևոր տարրը թվային հարթակների ստեղծումն է, քանի որ մեծ նշանակություն ունեն անդամ երկրների հեռահաղորդակցության ոլորտի հնարավորությունների բացահայտումը և գնահատումը, ինչը դեռ մանրամասն կատարված չէ, և մինչ ռազմավարական մնացած տարրերը դիտարկելը պետք է նախ հասկանալ, թե որ երկիրը ինչպիսի թվային հարթակի կկարողանա անդամակցել:

Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ակնկալվում է, որ ամբողջ աշխարհում առաջադեմ թվային հմտություններ ունեցող մասնագետների համար 2018–2030 թթ. ժամանակահատվածում կլինի առնվազն 10 մլն թափուր աշխատատեղ<sup>20</sup>:

Հայաստանում տեխնոլոգիական ոլորտի արագընթաց զարգացումը մեծապես նպաստել է SS աշխատանքային շուկայի թե՛ որակական, թե՛ քանակական աճին, սակայն ապագայի թվային տնտեսության համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների խնդիրը դեռևս լուրջ մարտահրավեր է երկրի համար<sup>21</sup>: Կարծում ենք՝ թվային տնտեսությանը միանալու առաջին ու կարևոր նախապայմանը հենց այս հարցի կարգավորումն է, ինչին նաև պետք է ուշադրություն դարձնեն ԵԱՏՄ անդամ բոլոր երկրները:

Ընդհանուր առմամբ, մինչև 2025 թվականը թվային տնտեսության ստեղծումն ու շահագործումը կապահովի ԵԱՏՄ ՀՆԱ տարեկան աճ՝ 0,3%-ով: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում (ՏՀՏ) զբաղվածության ավելացումը կնպաստի ընդհանուր աշխատատեղերի լրացուցիչ աճին՝ 2.46%-ով: Նույն տարում ՏՀՏ ծառայությունների արտահանման ծավալի լրացուցիչ աճը կարող է հասնել 74%-ի, ինչը, կարծում ենք, կարևոր ցուցանիշ է անդամ բոլոր երկրների տնտեսական զարգացման գործում:

Խոսելով թվային օրակարգի իրականացման հիմնական ուղղությունների նախագծի մասին՝ նշենք, որ դա պատրաստվել է անդամ պետությունների կառավարությունների կողմից՝ հանձնաժողովի հետ միասին, ԵԱՏՄ երկրների ղեկավարների հանձնարարականների համաձայն: Թվային տնտեսության զարգացման նախաձեռնությունները քննարկելիս յուրաքանչյուր ոլորտում համագործակցության հատուկ շրջանակ է սահմանվում: Կողմերն օգտագործում են ուղղությունների ընդհանուր կետեր՝ թվային օրակարգի շրջանակներում համագործակցության առաջարկները համակարգելու, համատեղ նախագծեր նախապատրաստելու և իրականացնելու համար: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության, Միության շրջանակներում թվային ինտեգրման մեջ կարող է ներառվել երեք տարր.

- Առաջին տարրը ԵԱՏՄ տվյալների X (Data X)<sup>22</sup>-ն է, որը էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանցման և փոխանակման միասնական

<sup>20</sup> Տե՛ս Հեռահաղորդակցության միջազգային միության պաշտոնական կայքէջ, <https://www.itu.int/en/Pages/default.aspx>

<sup>21</sup> Տե՛ս Հայաստանի թվայնացման ռազմավարություն. 2021-2025, հավելված N 1, ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183 -Լ որոշումը, [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2021/02/183\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/183_1.pdf), էջ 13:

<sup>22</sup> Տե՛ս «DataXtd» ընկերության պաշտոնական կայքէջ, <http://dataxtd.com/>

ենթահամակարգ է: Դա կարող է օգտագործվել տեղեկատվություն փոխանակելու և իրավաբանորեն համապատասխան արձանագրությունները մասնավոր ընկերությունների միջև փոխանակելու համար: Բայց այստեղ, կարծում ենք, առաջին հերթին պետք է կարգավորվի անդամ երկրների օրենսդրական դաշտը և, մասնավորապես, կանոնակարգվի տվյալների պաշտպանության մեխանիզմը:

- Երկրորդ տարրը ԵԱՏՄ ID-ն է, որը էլեկտրոնային վստահության միասնական տարածք է, ներառում է նույնականացման և թվային արխիվացման ծառայություններ: Դա թույլ կտա, օրինակ, թվային ձևաչափով վկայագրեր տրամադրել մեկ այլ երկրի տարածքում գտնվող երկրի քաղաքացիներին: Այստեղ պետք է հաշվի առնել այդ համակարգին միանալու բոլոր տեխնիկական խնդիրները, որոնք կարող են առաջանալ անդամ երկրներում առկա կապի ծածկույթի հետ կապված, որը մինչ այսօր դեռ գնահատված չէ:

- Երրորդ տարրը՝ ԵԱՏՄ Geo-ն է, որը աշխարհագրական տեղեկատվական համակարգն է և քարտեզագրական ծառայություններ է մատուցում, որոնք օգնում են պարզեցնել ապրանքների փոխադրման և վերահսկողության գործընթացը:

ԵԱՏՄ թվային տնտեսության ստեղծման համար առանցքային նշանակություն ունեն նաև տրանսպորտային միջանցքները, որոնց միջոցով պետք է կազմակերպվի բեռնափոխադրումների ամբողջական գործընթացը: 2018 թվականին, կապված տրանսպորտային ցանցի ստեղծման հետ, կար 3 նախաձեռնություն՝

1. ԵԱՏՄ թվային միջազգային երկաթուղային տրանսպորտային միջանցքի ստեղծում. նախաձեռնողը «Նովակոմ գրուպ»<sup>23</sup> ՍՊԸ-ն է (Բելառուսի Հանրապետություն).
2. Թվային եվրասիական տրանսպորտային միջանցքի ստեղծում. նախաձեռնողը «Ինտելեկտուալ տրանսպորտային տեխնոլոգիաներ» ՍՊԸ-ն է (Ռուսաստանի Դաշնություն)<sup>24</sup>.
3. Տարանցիկ երթևեկության մշտադիտարկում. նախաձեռնողը «RT-Invest Transport Systems»<sup>25</sup> ՍՊԸ-ն է (Ռուսաստանի Դաշնություն)<sup>26</sup>:

Թվային տնտեսությունը մի շարք առավելություններ կապահովի տրանսպորտային միջանցքներում փոխգործակցության մասնակիցների (սուբյեկտների) բոլոր խմբերի համար. առավելություններ կստեղծի բիզնեսի համար, մասնավորապես՝

- ԵԱՏՄ երկրների համար օպտիմալ փոխադրման ուղիներ պլանավորելու, բեռնափոխադրման ծառայություններ, պահեստավորման և փոխադրման ծառայություններ ապահովելու համար միատարր ծառայությունների ստացում,
- բեռների գտնվելու վայրի և դրանց վիճակը վերահսկելու համար տվյալների ստացում,

<sup>23</sup> Տե՛ս «Nvcm» ընկերության պաշտոնական կայքէջ, <https://nvcm.net/>

<sup>24</sup> Տե՛ս «Inteltech» ընկերության պաշտոնական կայքէջ, <http://inteltech.center/>

<sup>25</sup> Տե՛ս «Rtits» ընկերության պաշտոնական կայքէջ, <https://www.rtits.ru/en>

<sup>26</sup> Տե՛ս «Trans Info» ընկերության պաշտոնական կայքէջ, <https://trans.info/ru/fts-rossii-provedet-eksperiment-po-monitoringu-tranzitnyih-perevozok-s-ispolzovaniem-navigatsionnyih-plomb-108678>

- առաքման միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպում,
- բեռնափոխադրումների պլանավորում՝ հաշվի առնելով տրանսպորտային ենթակառուցվածքի տեխնիկական բնութագրերը և երթևեկության հոսքերի պարամետրերը,
- ԵԱՏՄ երկրների իշխանություններին տեղեկատվական ծառայությունների մատուցում,
- շրջակա միջավայրի մշտադիտարկում՝ նվազագույնի հասցնելով տրանսպորտային համակարգի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա<sup>27</sup>:

Կարծում ենք՝ տրանսպորտային միջանցքների ստեղծումը կնպաստի ՀՀ արտաքին առևտրի շրջանառության ծավալների ավելացմանը, ինչն էլ, իր հերթին, կազդի երկրի տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման վրա: Առաքման միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպումը կհեշտացնի ինչպես Հայաստանի, այնպես էլ մյուս անդամ երկրների առևտրի կազմակերպումն ու կառավարումը, իսկ բեռների գտնվելու վայրի և վիճակի մասին տեղեկատվության ստացումը թույլ կտա բեռնափոխադրման ողջ ընթացքին հետևել և ավելի հեշտ վերահսկել ամբողջական գործընթացը:

<i>Տեսլական, ռազմավարություն և քաղաքականություն</i>	<i>Բարենպաստ ոլորտներ</i>	<i>Թվային ենթակառուցվածք</i>	<i>Թվային որոշումներ</i>
<ul style="list-style-type: none"> <li>• տեսլական և ռազմավարություն</li> <li>• օրենսդրություն (հեռահաղորդակցություն, տվյալներ, էլեկտրոնային առևտուր)</li> <li>• թվային ինովացիոն արդյունաբերություն</li> <li>• կապի քաղաքականություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• կառավարման համակարգ</li> <li>• ներդրումային ֆոնդ</li> <li>• հեռահաղորդակցության տվյալների պաշտպանության հաստատությունների ստեղծում՝ CERT-EU</li> <li>• մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած արդյունքների վերլուծություն</li> <li>• թվային հմտությունների զարգացում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• հեռահաղորդակցություն և միացում համացանցին</li> <li>• էլեկտրոնային նույնականացման և վավերացման ծառայություններ</li> <li>• տեղեկատվական անվտանգություն</li> <li>• ամպային ենթակառուցվածքներ և նախաձեռնություններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• էլեկտրոնային առևտուր</li> <li>• էլեկտրոնային մաքսատուն</li> <li>• էլեկտրոնային լոգիստիկա</li> <li>• արդյունաբերության թվայնացում</li> <li>• տվյալների տնտեսություն</li> <li>• առևտրային հարթակ</li> <li>• թվային ֆինանսներ՝ ֆինտեք</li> <li>• թվային ինտեգրման հարթակ</li> <li>• IT չափորոշիչներ</li> </ul>

**Գծապատկեր 5. ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման առաջարկությունները (միության մակարդակով առանցքային գործողությունները)<sup>28</sup>**

<sup>27</sup>Տե՛ս ԵԱՏՄ թվային օրակարգ,

[http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital\\_agenda\\_eaeu.pdf](http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital_agenda_eaeu.pdf), էջ 57:

<sup>28</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգը մինչև 2025 թվականը.

հեռանկարներ և առաջարկություններ» զեկույցը,

<http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>, էջ 25:

Այսպիսով՝ համաձայն ռազմավարության, մենք այժմ թվային օրակարգի իրականացման երկրորդ փուլում ենք, որը նախատեսում է թվային տնտեսության ինստիտուտների և թվային ակտիվների ձևավորում: Եվ այս ամենը, ըստ պլանի, պետք է իրականացվի մինչև 2022 թվականի ավարտը: Գծապատկեր 4-ում ներառված բոլոր կետերը ԵԱՏՄ թվային օրակարգի առաջնահերթություններն են, որոնք պահանջում են փուլային՝ քայլ առ քայլ իրականացում:

Այս օրակարգի իրականացման հիմքում պետք է դրված լինի ոչ միայն ԵԱՏՄ գործունեությունը, այլև անդամ պետություններից յուրաքանչյուրի հնարավորությունները, տնտեսության առանձնահատկությունները և տվյալ գործընթացին մասնակցելու կարողությունները: Հարկ է գնահատել նաև յուրաքանչյուր երկրի հեռահաղորդակցության ոլորտի հնարավորությունները, քանի որ թվային տնտեսության ստեղծման ու զարգացման հիմքում հենց նշված ոլորտի, հատկապես՝ կապի ծառայություններն են: Կարծում ենք՝ թվային օրակարգի իրականացման յուրաքանչյուր կետ սերտորեն փոխկապակցված է մյուսի հետ, և դրանցից մեկի չիրականացումը կամ խափանումը կարող է բացասական կերպով ազդել թվային տնտեսության համակարգի վրա: Այդ ամենից խուսափելու համար, մեր կարծիքով, յուրաքանչյուր երկիր պետք է կազմի թվային տնտեսությանը միանալու և ինտեգրվելու գործողությունների շղթա և գնահատի իր հնարավորություններն ու այդ գործողությունների կատարման կարողությունները:

Որպես օրինակ դիտարկենք ՀՀ-ն և նշենք, որ Կառավարությունը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» նախագիծ է ընդունել<sup>29</sup>:

Ըստ այդ նախագծի՝ ՀՀ-ում թվայնացման գործընթացի ապահովման նպատակով Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը պետք է համալրել համապատասխան մասնագիտական կարողություններով, որոնց միջոցով նախարարությունը կկարողանա աշխատել տարբեր գերատեսչությունների հետ, կազմել համապատասխան տեխնիկական առաջադրանքներ՝ ներառյալ թվային լուծումների պահանջներ, թվայնացման գործընթացներ և այլն: Սա մասնագիտական գործառույթ է, որը ենթադրում է ոլորտի բարձրակարգ մասնագետների ներգրավվածություն: Մասնավորապես՝ պետք է.

- Վերլուծել թվայնացման ենթակա գործառույթը և կազմել գործառույթի ֆունկցիոնալ նկարագիրը, վերլուծել դրա տեխնիկական իրագործելիության հնարավորությունները, կազմել և ներկայացնել տեխնիկական առաջադրանքը:
- Աջակցել նախագծերի իրականացմանը տեխնիկական և գործառույթային տեսանկյունից:
- Ստուգել չափորոշիչներին համապատասխանությունը, այդ թվում՝ այլ թվային համակարգերի հետ ինտեգրման տեխնիկական հնարավորությունները:

<sup>29</sup> Տե՛ս ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կայքէջ, <https://www.e-draft.am/projects/2524/justification>

- Բավարարել տվյալների կենտրոնին (Կառավարական ամպային ենթակառուցվածք) ներկայացվող պահանջները:
- Իրականացնել վերջնական աշխատող տեխնիկական համակարգի (լուծման) թեստավորում և ընդունում:
- Հետևել որոշ տեխնիկական խնդիրների լուծումների հետագա սպասարկմանը և արդիականացմանը:

Կարծում ենք՝ թվային համակարգի ստեղծման և շահագործման համար ԵԱՏՄ անդամ երկրները պետք է այս բոլոր կետերի կատարման հարցում հետևողական լինեն, յուրաքանչյուրը պետք է գնահատի իր երկրի հնարավորությունները և մշակի գործողությունների այնպիսի շղթա, որը թույլ կտա հեշտությամբ ներգրավվել համակարգում և միանգամից ինտեգրվել:

**Եզրակացություն:** Այսպիսով՝ ուսումնասիրելով ԵԱՏՄ թվային տնտեսության համակարգի ստեղծման ռազմավարությունը, դրա նախագծման ու իրականացման ընթացակարգը, եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ելնելով Եվրասիական տնտեսական միության գործունեության սկզբից ի հայտ եկած հեռանկարներից և առավելություններից՝ կարող ենք նշել, որ գրեթե բոլոր անդամ երկրների տեսանկյունից հիմնական շեշտը դրված է ապրանքների շուկաների վրա: Եվ հիմա բոլոր քննարկումները հիմնականում վերաբերում են այն խնդիրներին, որոնց բախվում են արտադրողները, երբ փորձում են իրենց ապրանքները հասցնել ԵԱՏՄ շուկաներ: Այստեղ, որպես լուծում, թվային օրակարգի հիմքում դրված է միասնական առևտրային միջանցքների ստեղծումը, ինչը, ենթադրվում է, կկարգավորի այդ խնդիրը:
- ԵԱՏՄ ստեղծման բուն գաղափարը հիմնված է ոչ միայն ապրանքների, այլ նաև ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի ազատության վրա: ԵԱՏՄ անդամ երկրներից մեկում՝ ՀՀ-ում, կա թվային տնտեսությանը միանալու աշխատուժի խնդիր, ինչը, կարծում ենք, թվային տնտեսությանն ինտեգրվելու լուրջ խոչընդոտ է:
- Շուկայի ծավալների առումով ԵԱՏՄ երկրներում ծառայությունների շուկան ավելի մեծ է, քան նույն ապրանքների շուկան. ՀՆԱ կառուցվածքում ծառայությունների շուկայի մասնաբաժինը գերազանցում է դրա 50%-ը, իսկ այս ոլորտում ընդհանուր զբաղվածությունը զբաղված բնակչության 70%-ից ավելի է: 2017 թվականի վերջին միայն Ղրղզստանում ծառայությունների ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է մոտ 49%<sup>30</sup>:
- ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման առաջարկությունները կազմված են 4 խոշոր բաժնից, որոնք էլ ունեն ենթատարրեր: Դրանցից յուրաքանչյուրի առկայությունը և իրականացումը առանցքային նշանակություն ունեն թվային տնտեսության համակարգին միանալու համար:

Մեր կարծիքով՝ թվային տնտեսության հիմքը հեռահաղորդակցության ծառայություններն են, օրենսդրական դաշտը և տեխնոլոգիական հնարավորությունները, որոնց առկայության և բարձր կարգով մատուցման դեպքում

<sup>30</sup> Տե՛ս «Kaktakto» ընկերության պաշտոնական կայքէջ, <https://kaktakto.com/analitika/edinyj-rynok-uslug-eaes-vozmozhnosti-i-vyzovy-dlya-kyrgyzstana/>



միայն հնարավոր կլինի ստեղծել և գործարկել «թվային տնտեսություն» մոդելը, ինչին պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն ընդհանուր միության, այլև առանձին-առանձին ամեն երկրի մակարդակով, յուրաքանչյուր երկրի հնարավորության սահմաններում: Բացի այդ, ամբողջ աշխարհում ինչպես նաև Հայաստանում կա թվային հմտություններ ունեցող մասնագետների կարիք, և թափուր աշխատատեղի ցուցանիշն աստիճանաբար աճում է, ինչը ներկա պահին խնդիր է երկրների համար:

Ուստի, որպեսզի ԵԱՏՄ երկրներն ավելի դյուրին կարողանան միանալ և ինտեգրվել թվային տնտեսության համակարգին ու չբախվեն հեռահաղորդակցության ոլորտին առնչվող խնդիրներին, օրենսդրական դաշտի բացերին և տեխնոլոգիական հնարավորությունների բացակայությանը, առաջարկում ենք.

- կարգավորել երկրի օրենսդրական դաշտը և հստակեցնել հարկային արտոնությունները,
- լուծել աշխատատեղերի բացակայության խնդիրը, կրթել և վերապատրաստել որակյալ և համապատասխան կադրեր,
- բարելավել հեռահաղորդակցության ծառայությունների որակը՝ համապատասխանեցնելով անդամ երկրների կապի ծառայությունների չափանիշներին,
- նոր տեխնոլոգիաներով զինել տնտեսության այն ոլորտները, որոնք անմիջականորեն մասնակցելու են թվային տնտեսության համակարգի գործունեությանը,
- թվային տնտեսության մոդելը կյանքի կոչել ոչ թե ամբողջ տնտեսության մակարդակով, այլ փորձարկել ըստ առանձին ճյուղերի՝ առկա խնդիրները և խոչընդոտները բացահայտելու նպատակով: Դա, կարծում ենք, հնարավորություն կտա ավելի քիչ ծախսերով, ռեսուրսներով և կարճ ժամանակում շահագործելու թվային տնտեսության ամբողջական մոդելը և ավելի արագ հասնելու արդյունավետության:

Այսպիսով՝ հաշվի առնելով կատարված եզրակացություններն ու ներկայացված առաջարկությունները և հիմք ընդունելով թվային տեխնոլոգիաների ու ծառայությունների նկատմամբ ներկայիս մեծ պահանջարկը, բիզնես գործընթացների պլանավորման, կազմակերպման և կառավարման գործընթացների հեշտացման կարևորությունը, կարող ենք փաստել, որ տվյալ նախագիծը ունի բարձրաստիճան անհրաժեշտություն, և դրա գործարկումը կարող է նպաստել անդամ երկրների տնտեսությունների զարգացմանը, ինչպես նաև միջազգային հարաբերությունների ընդլայնմանն ու արտաքին առևտրաշրջանառության ծավալների ավելացմանը:

### Օգտագործված գրականություն

1. Воронина Т. В., Евченко Н. Н., Яценко А. Б., Состояние и стратегии развития цифровой экономики стран ЕАЭС, Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского, «Экономика и управление», 2018.

2. Карпова С.Г., Селезнев И.А., О развитии инновационных проектов и цифровой экономики ЕАЭС: возможности, вызовы и риски.
3. Куприяновский В.П., Дунаев О.Н., Федорова Н.О., Намиот Д.Е., Куприяновская Ю.В., Интеллектуальная мобильность в цифровой экономике, International Journal of Open Information Technologies, ISSN: 2307-8162, N2, 2017.
4. <https://cyberleninka.ru/article/n/intellektualnaya-mobilnost-v-tsifrovoy-ekonomike/viewer>
5. <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>
6. [https://bis.lexisnexis.com/intnl/bigdatatools?gclid=CjwKCAiAnO2MBhApEiwA8q0HYW00Fq5jUxiUKawI24WKm53K0NXvBfvINxHrnBJWF4h\\_jB36EpFdVRoCcu4QAvD\\_BwE](https://bis.lexisnexis.com/intnl/bigdatatools?gclid=CjwKCAiAnO2MBhApEiwA8q0HYW00Fq5jUxiUKawI24WKm53K0NXvBfvINxHrnBJWF4h_jB36EpFdVRoCcu4QAvD_BwE)  
<https://cyberleninka.ru/article/n/o-razvitii-innovatsionnyh-proektov-i-tsifrovoy-ekonomiki-eaes-vozmozhnosti-vyzovy-i-riski/viewer>
7. <file:///C:/Users/LS/Downloads/sostoyanie-i-strategii-razvitiya-tsifrovoy-ekonomiki-stran-eaes.pdf>
8. <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/SiteAssets/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%20%D0%92%D0%91.pdf>
9. [http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital\\_agenda\\_eaeu.pdf](http://www.eurasiancommission.org/ru/Documents/digital_agenda_eaeu.pdf)
10. <http://datax ltd.com/>
11. <https://nvcm.net/>
12. <http://inteltech.center/>
13. <https://www.rtits.ru/en>
14. <https://trans.info/ru/fts-rossii-provedet-eksperiment-po-monitoringu-tranzitnyih-perevozok-s-ispolzovaniem-navigatsionnyih-plomb-108678>
15. <https://kaktakto.com/analitika/edinyj-rynok-uslug-eaes-vozmozhnosti-vyzovy-dlya-kyrgyzstana/>

## ԼՍՏԻՆԵ ՏԵՓԱՆՅԱՆ

*Տոսկատել կաբեդրի մեխլառարդնիկ էկոնոմիկեսկի ռոնոշենի ԱԴԷՄ*

**Անալիզ ստրադեգիի ճիգրոյայ էկոնոմիկի ԵԱԷՏ.**– Յ 2022 ցոլա նեոառառնո թրեդաոթալի ստրաոա իլի ռգաոիզաոիոն, սոսոբոնոյա նալադիլի մեխլառարդնիկ ռոնոշենիա, եո ճիգրոյայ էկոնոմիկի. Տրեդաոա ճիգրոյայ էկոնոմիկի ԵԱԷՏ ռոնոաո Նա էկոնոմիկեսկո սոտրլաոնիկեստե ի ռազոյալի ցոսլառաոթո՛ոոնո. Տո ստրադեգիկեսկոյ ճոոկի ճրեոիա մոդել «ճիգրոյայ էկոնոմիկի» ելադ իմեթ նաոնոլիշե ոլաոիա Նա թրոմիշլենոյա ռազոյալի ստրաո, ռոստ տրոցոյա, ռգաոիզաոիոն ի ոլառաոլիկ ռազոյալիկի եոսնես-թրոցեսալի, սոսլաոա ճիգրոյայ իոնոթրաոստրուկտրաոյ ի ստրոյտելոստոյա ոնոյա էկոնոմիկեսկի մոդելի Նա իո ոնոա. թոչոտոյա ճելոյա իսսլեդոաոյա յալաոթալի յալաոա ի ոնոալիզաոիոն «ճիգրոյայ էկոնոմիկի», ռնալիզ ճիգրոյալի ժիոյաոնոյո, յալաոթալի ոնոալիզաոիոն, ա տալաե յալաոալիկ

влияния «Цифровой экономики» на рост занятости страны и анализ прогнозов.

**Ключевые слова.** ЕАЭС, цифровая экономика, электронная коммерция, стратегия, цифровой бизнес

JEL: L81, O32, O33

DOI: 10.52174/1829-0280\_2022.4-97

## LUSINE STEPANYAN

*PhD Student of the Chair of International Economic Relations of ASUE*

***Analysis of the Strategy of the EEU Digital Economy.*** – In 2022, it is impossible to imagine any country or organization that can establish international relations without a digital economy. The creation of the EEU digital economy is based on economic cooperation and development between the member states. From a strategic point of view, the "digital economy" model will have the greatest impact on the industrial development of countries, the increase of trade turnover, the organization and management of various business processes, the creation of digital infrastructure, and the construction of new economic models based on them. Therefore, the purpose of this paper is to study and analyze the strategy of the "Digital Economy", examine the digital dividends underlying the strategy, as well as to reveal the impact of the "Digital Economy" on the "employment growth" of the country and analyze the forecasts.

**Keywords.** EEU, digital economy, e-commerce, strategy, digital business

JEL: L81, O32, O33

DOI: 10.52174/1829-0280\_2022.4-97